ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 14 -ին, N 248 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՍԱՍՈՒՆԻԿԻ Գ. ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐԾԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետով և հիմք ընդունելով «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Իսրայելյանի 2025 թվականի հուլիսի 14-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Իսրայելյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 18-ը ներառյալ:

2. Անահիտ Իսրայելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ծովինար Մանուկյանի վրա:

3. Անահիտ Իսրայելյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 19-ից:

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

2025-07-15 12:57:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՇԻՆ ԼՈՐԻՆԱՅԻ

Պարտականությունները կատարող՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ